ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՍՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՎՐԱՎԵՐՆԵՐ*

«ՍՐԲՈՑ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ» ՈՒՍՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

«Հաւատամք յԵկեղեցի սուրբ՝
զթողութիւն մեղաց հաղորդութեամբ սրբոց»[2]:

Ժամանակակից կրոնական շարժումների շատ հետեւորդներ՝ հիմնականում Բողոքական եկեղեցու ճյուղավորումների, որպես կանոն, հաճախ պնդում են, թե սրբերի բարեխոսության ուսմունքը սուրբգրային չէ եւ, հետեւաբար, մերժելի է:

Իսկ ինչ է Սրբերի բարեխոսության ուսմունքը:

Եկեղեցին իր երկու մասով՝ Երկնային եւ Երկրավոր կամ Հաղթական եւ Ջինվորյալ, մեկ մարմին է, եւ այդ մասերը բաժանված չեն, այլ կարիք ունեն իրար հետ աղոթքով[3] հաղորդակցվելու. սա էլ սրբերի հետ հաղորդակցության ուսմունքն է՝ Հաղթական եկեղեցին իր բարեխոսությամբ, իսկ Ջինվորյալ եկեղեցին իր աղոթքներով[4]:

Սրբերը մեռած չեն, այլ հրեշտակների նման են, «քանի որ այլեւս մեռնել անգամ չեն կարող, որովհետեւ հրեշտակների նման են եւ Աստծու որդիներ, քանի որ յարութեան որդիներ են: Իսկ թէ մեռելները յարութիւն են առնում, Մովսէսն էլ այդ գուշակեց մորենու օրինակի մէջ, ինչպէս որ ասում է Տիրոջ մասին՝ «Աստուած Աբրահամի, Աստուած Իսահակի եւ Աստուած Յակոբի»: Իսկ Աստուած մեռելների Աստուածը չէ, այլ՝ ողջերի, որովհետեւ բոլորը նրա համար կենդանի են» (Ղուկ. Ի. 36-38):

Այս սկզբունքն իր էությամբ չի հակասում սուրբգրային այն համարին, թե «մէկ Աստուած կայ եւ մէկ միջնորդ Աստծու եւ մարդկանց միջեւ. Յիսուս Քրիստոս մարդը» (Ա. Տիմ. Բ. 5), քանի որ համարի շարունակությունից պարզ է դառնում, թե ինչ է առաքյալը ուզում ասել. «որ տուեց Ինքն Իրեն որպէս փրկանք բոլորի համար՝ ի վկայութիւն իր ժամանակների» (Ա. Տիմ. Բ. 6): Ընդհանրապես «մարդկանց աղօթից (վասն ննջեցելոց) եւ Սրբոց (ննջեցելոց եւ հրեշտակաց) բարեխօսութեան նպատակը (վասն կենդանեաց) այլ

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա.:

2 «Ժամագիրք ատենի», Ս. Էջմիածին, 1999, էջ 177:

3 Բ. Կորնթ. ԺԳ. 9. Եփես. Զ. 17-18. Բ. Թեսաղ. Ա. 11. Հակ. Ե. 14-16. Ա. Տիմ. Բ. 1. Հռոմ. ԺԵ. 30-32:

4 **Ա. Տէր-Միքէլեան,** Հայաստանեայց Ս. Եկեղեցու Քրիստոնէականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 525-526. **Սարգիս Գնունի,** Քրիստոնէական վարդապետութիւն ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1879, էջ 215:

է Քրիստոսի միջնորդութիւնէն, եւ համաձայն է Ս. Գրոց վարդապետութեան, զոր մերժողն դուրս է ուղղափառ Եկեղեցւոյ միութենէն»[5]: Այսպեղ, անշուշտ, առաքյալը նկատի ունի Հիսուսի քավչարար մահը, որ փրկություն բերեց աշխարհին: Այդ միջնորդը պետք է լինի այնպիսին, որ լինի նույնական երկու կողմի՝ և՛ Աստծու և՛ մարդկանց հետ: Այդպիսին միայն Հիսուսն է՝ Աստված կատարյալ եւ մարդ կատարյալ:

Բայց սա չի նշանակում՝ Հիսուս, որպես միջնորդ, որ աղոթում է մարդկանց համար, եւս միակն է: Հոգին բարեխոսում է (Հռոմ. Ը. 20), շատ սրբեր բարեխոս են մեզ համար (Բ. Կորնթ. Ա. 11) եւ այլն:

Նշենք նաեւ, որ հունարեն բնագիրը *աղոթել* բայի գործածության մի քանի ձեւեր ունի.

προσεύχῃ - Մատթ. Ե. 44, Զ. 6 եւ այլուր,

εὐχόμαι - Բ. Կորնթ. ԺԳ. 7, 9 համարներում, Հակ. Ե. 16 -ում:

Վերջին բայական ձեւը՝ εὐχόμαι-ը հունարենում աղոթել իմաստից բացի ունի մեկ այլ իմաստ եւս՝ *միջամտել աղոթքով*, որը նշանակում է նաեւ *միջնորդական աղոթք*[6]: Lampe-ն այդ բառին, ի շարս մյուս իմաստների, հաղորդում է նաեւ *միջնորդական աղոթք* իմաստը: Բառարանն առանձնացնում է հետեւյալ իմաստները[7].

ա. ապրող մարդկանց աղոթք

բ. երկնքում սրբերի աղոթք

գ. հրեշտակների աղոթք:

Այս վերջինները, պարզ է, միջնորդական աղոթքի իմաստն ունեն:

Ստորեւ բերում ենք սուրբգրային այն հիմնական համարները՝ համապատասխան բացատրություններով, որոնք վկայում են, որ սրբոց հետ հաղորդակցության ուսմունքը խորթ չէ Ս. Գրքին:

ա. Հոր ԻԲ. 7-9.

«Երբ Տէրը Յոբի հետ այս բաները խօսեց, Աստուած ասաց Եղիփազ Թեմնացուն. «Մեղք գործեցիր դու, եւեւ քո երկու բարեկամները, քանի որ իմ առաջ ճշմարիտ բան չասացիք, ինչպէս իմ ծառայ Յոբը: Բայց հիմա եօթը զուարակ առէք ու եօթը խոյ, գնացէք իմ ծառայ Յոբի մօտ, ու թող նա ողջակէզ անի ձեզ համար, իմ ծառայ Յոբը թող նաեւ աղօթի ձեզ համար, քանի որ, եթէ ես նկատի ունեցած չլինէի նրան, ու նրա համար չլինէր այս, ես արդարեւ կորստի մատնած կը լինէի ձեզ, որովհետեւ իմ ծառայ Յոբի մասին ճշմարիտ բաներ չասացիք»: Եղիփազ Թեմնացին, Բաղդատ Սոքեցին ու Սոփար Մինեցին գնացին ու արեցին այնպէս, ինչպէս Տէրն էր հրամայել իրենց: Եւ թողութիւն շնորհեց նրանց մեղքերին՝ յանուն Յոբի»:

Աստված Ինքն է պատվիրում Հոբի բարեկամներին գնալ նրա մոտ, որ նա՝ Հոբը, իրենց մեղքերի թողության համար աղոթք անի: Շեշտենք, որ այս պարագային, Աստ-

5 **Սարգիս Գնունի,** Քրիստոնէական վարդապետութիւն ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, էջ 216:

6 Անգլերեն՝ intercessory prayers, **G. W. H. Lampe**, *A Patristic Greek lexicon*, Oxford, 1982, էջ 584:

7 Անդ:

ծո պատվերով Հոբին շնորհվում է քահանայական իշխանություն՝ մեղքերին թողություն տալու: Հոբը փաստորեն դառնում է միջնորդ Աստծու եւ իր բարեկամների միջեւ:

բ. Ծննդոց Դ. 10.

«Այդ ինչ արեցիր, քո եղբօր արեան կանչը երկրից բողոքում է ինձ»:

Այստեղ ներկայացված է մի դեպք, երբ Կայենի եղբայրը, որին ինքն էր սպանել, մահվանից հետո չի գտնվում անգիտակից կամ չգոյության վիճակում, ինչպես հաճախ պնդում են[8], այլ գիտակցական, ավելին, նրա արյունն անգամ բողոքում է: Որքան էլ սա դիտենք որպես չափազանցում՝ հիպերբոլիկ հնար, երեւույթի նշանակությունն առավել սաստկացնելու, ազդու դարձնելու նպատակով, պետք է նկատի ունենալ, որ Ս. Գիրքը նման մոտեցումներում միշտ մնում է իրականության սահմաններում[9]: Պողոս առաքյալը Եբրայեցիներին ուղղված իր թղթում հիշատակում է Աբելի արյան մասին՝ նույնացնելով այն Աբելի անձի հետ. «Նա, թէպէտեւ հաւատով մեռաւ, սակայն խօսում է դեռ» (Եբր. ԺԱ. 4): Այսինքն Նա՝ Աբելը, հավատով մեռավ, բայց խոսում է, եւ Ծնն. Դ. 10-ից հետեւում է, որ այդ խոսողը արյունն է: Իսկ սա նշանակում է, որ այստեղ եւ Ծննդոցում չափազանցման՝ հիպերբոլիկ հնարի մասին չէ խոսքը:

Ավելին, Պողոս առաքյալը բացահայտ գրում է, որ խոսողը՝ Աբելի արյունը, ըստ Ծննդոցի, նույն ինքն Աբելն է. «Հաւատո՛վ էր, որ Աբէլը Աստծուն աւելի լաւ զոհ մատուցեց, քան Կայէնը, որով էլ վկայութիւն ստացաւ, որ արդար է. քանի որ նրա մատուցած զոհերի՛ համար տրուեց նրան վկայութիւն Աստծուց: **Նա, թէպէտեւ հաւատով մեռաւ, սակայն խօսում է դեռ**»[10]:

Այս համարը ցույց է տալիս, որ սկսած Ս. Գրքի առաջին էջից մինչեւ վերջինը՝ Աբելի արյունը «խոսում է դեռ»: Նույն թղթի մեկ այլ համար եւս փաստում է մահվանից հետո հոգիների գիտակցական գոյությունը[11]:

Աղոթական միջնորդության օրինակ է նաեւ Կորխի օրինակը. այսպես, մինչեւ Մովսեսը չաղոթեց, Աստված նրանց՝ Կորխին ու նրա համախոհներին չընդունեց, եւ երկիրը իր երախը չբացեց (Թ-իւք ԺՁ. 32-33):

Յովհ. Ե. 45-ում Հիսուս ասում է. «Մի՛ կարծէք, որ ես Հօր մօտ ձեզ պիտի **ամբաստանեմ.** կայ մէկը, որ որպէս **ամբաստանող** կը կանգնի ձեր դէմ՝ Մովսէսը, որի վրայ դուք յոյս էք դրել»:

Ընդգծված բառերը հունարեն բնագրի **κατηγορέω** բայի թարգմանությունն են, որը

8 Օրինակ ժամանակակից ադվենտիստները: Նրանց վարդապետության համաձայն՝ մահվանից հետո մարդու հոգին էլ է մեռնում (հոգեքնածության՝ soul-sleeping-ի վարդապետությունը):

9 Եբրայական բնագրի նշված համարում **արյուն** բառը՝ דְּמִי (dmiy, dem-ee՛) հոգնակի թիվ ունի: Բնականաբար, այդ կարելի է հասկանալ երկու իմաստով. թափած արյան ամեն կաթիլի համար մարդասպանը պետք է պատասխան տա, այսինքն՝ այդ խիստ հրահանգը կյանքի պահպանման յուրահատուկ պահանջ է, կամ էլ դա ակնարկ է Աբելի սերունդի մասին, որը նա կունենար, եթե կենդանի մնար:

10 Եբր. ԺԱ, 4:

11 «Բայց դուք մօտեցել էք Սիոն լեռանը եւ կենդանի Աստծու քաղաքին, երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին, երկնքում գրուած անդրանիկների հանդիսաւոր ժողովին, բոլորի դատաւոր Աստծուն, կատարելութեան հասած արդարների հոգիներին եւ Յիսուսին՝ նոր ուխտի միջնորդին, եւ նրա արեան հեղումին, որ աւելի խօսում է, քան արիւնն Աբէլի» (Եբր. ԺԲ, 23-24):

կազմված է՝ κατά եւ ἀγορεύω բառերից[12], որ թարգմանվում է դեմ+խոսել = ընդդիմախոսել: Այդ պատճառով գրաբարն այդ բառը թարգմանել է *ընդդիմախոսել*-ի հոմանիշ *չարախոսել* բայով. «Մի՛ համարիք եթէ ես չարախօս՝ ինչ իցեմ զձէնջ առ Հօր. զո՛յ որ չարախօս՝ կայ զձէնջ՝ Մովսէ՛ս. յոր դուքն յուսացեալ էք»:

Այդ նույն բայը՝ **κατηγορέω** ձեւով, Նոր Կտակարանում հանդիպում ենք նաեւ Հայտ. ԺԲ. 10 համարում. «Եւ լուա՛յ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր. Արդ եղեւ՛ զօրութիւն եւ փրկութիւն եւ արքայութիւն Աստուծոյ մերոյ, եւ իշխանութիւն Օծելոյ նորա. զի անկա՛ւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէ՛ր զնոցանէ առաջի Աստուծոյ՝ զտիւ եւ զգիշեր»:

Բերված համարներից երեւում է, որ Աստծո առաջ չարախոսողներ կան՝ թե՛ հրեշտակ, թե՛ մարդ, որի մահվան մասին հիշում է Ս. Գիրքը[13]: Իսկ եթե Աստծո առաջ խոսելու այդ սկզբունքը իրական է, ապա բնական է, որ խոսելու նյութի բովանդակությունը կարող է լինել եւ՛ չար, եւ՛ բարի, ուրեմն կան եւ՛ չարախոսներ, եւ՛ բարեխոսներ:

Օրինակ՝ **Զաքար. Ա. 12** համարից հետեւում է, որ ի տարբերություն վերը բերած չարախոսության, հրեշտակները կարող են բարեխոսել մարդկանց՝ ապրողների համար. «Պատասխանեց Հրեշտակը եւ ասաց. «Տէ՛ր Ամենակալ, մինչեւ ե՞րբ չես ողորմելու Երուսաղէմին եւ Յուդայի երկրի քաղաքներին, որոնց այս եօթանասուն տարի է, ինչ անտես ես արել»:

Այդ սկզբունքը՝ մարդկանց հոգիների բարեխոսությունը ապրողների համար, արտահայտված է նաեւ սուրբգրային մի քանի այլ համարներում.

գ. Երեմ. ԺԵ. 1.

«Տէրն ինձ ասում է. «Եթէ Մովսէսն ու Սամուէլն իսկ իմ դիմաց կանգնեն, ես հոգով այդ ժողովրդի հետ չեմ լինի. այդ ժողովրդին հեռո՛ւ վանիր ինձնից, թող հեռանա՛»:

Այս համարում Երեմիա մարգարեն աղոթում է ժողովրդի համար, այսինքն՝ օրինակ է, երբ ապրողը բարեխոսում է ապրողի կամ ապրողների համար: Իսկ Տիրոջ պատասխանից պարզ է դառնում, որ ննջեցյալները՝ Մովսեսն ու Սամուելը, կարող են «կանգնել Իր առաջ», այսինքն՝ բարեխոսել ժողովրդի համար[14]:

Բ. Օր. Թ. 27. Մովսեսը շնորհ է խնդրում Աստծուց իր նախնիների անուններով՝ Աբրահամի, Իսահակի, Հակոբի:

Բ. Մնաց. Զ. 12-42. Սողոմոնի աղոթքը, ուր նա Աստծուց շնորհ է խնդրում իր հոր՝ Դավթի անունով:

Դանիել Գ. 12-13, Ժ. 55-56. Բաբելոնյան գերության մեջ նրանց համար հրեշտակներն են աղոթում:

Մեծապան եւ Ղազարոսի առակում Հիսուս ցույց տվեց, որ անարժանների բարեխոսական՝ միջնորդական աղոթքը Աստված չի լսում եւ չի ընդունում, ինչպես Աբրահամը չլսեց մեծապան միջնորդական աղոթքն իր եղբայրների համար, իսկ այգեգործի միջնոր-

12 Անգլերեն՝ to harangue, to speak against. տե՛ս "Greek-english lexicon to the New Testament", by the rev. Thomas Sheldon Green, London, 1976, էջ 98:

13 Բ. Օր. ԼԴ. 6:

14 **Սարգիս Գնունի**, Քրիստոնէական վարդապետութիւն ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1879, էջ 217:

դական աղոթքը՝ անպտուղ թզենու համար, այգեպերը լսում է եւ խնայում[15]: Հայտնության գրքում Հովհաննես առաքյալը տեսավ, որ մարտիրոսները բողոքում էին Աստծուն՝ իրենց արյան վրեժը պահանջելով[16]:

Հիսուս անգամ զգուշացնում է, որ չանարգենք փոքրիկներից եւ ոչ մեկին, որոնց հրեշտակները մշտապես տեսնում են Հոր երեսը, այսինքն՝ նրանք երկնքում մշտական բարեխոսական աղոթքի մեջ են[17]:

Այսպիսով, Հաղթական եկեղեցին՝ իր պարտականություններին հավատարիմ, շարունակում է կապը ամուր եւ կենդանի պահել Ջինվորյալ եկեղեցու հետ: Հակառակ կապն էլ արտահայտող սուրբգրային բազում օրինակներ կան, երբ Ջինվորյալ եկեղեցին է աղոթում Հաղթական եկեղեցու համար[18]:

Բ. Մնաց. Զ. 42-ում Սողոմոնը խնդրում է հիշել իր հորը՝ Դավթին. «Տէր Աստուած, երես մի դարձրու քեզնից օծուածից, յիշիր քո ծառայ Դաւթին քո ողորմութեամբ»:

Նոյթ Բ. 20-ում Նոյեմին օրհնեց Բոոսին. «Օրհնեալ լինի նա Տիրոջից, որ իր գութը չպակասեցրեց ողջերից եւ մեռածներից»: Այսինքն՝ Բոոսը ողորմություն էր անում ննջեցյալների եւ ապրողների համար:

Բ. Մակաբ. ԺԲ. 45-46 համարներում կարդում ենք, որ Հուդա Մակաբեն. «Եթէ պատերազմում ընկածների յարութեան ակնկալութիւն չունենար, զուր կը լինէր մեռելների համար աղօթք մատուցելը: Նա ճիշտ էր հասկացել, որ գեղեցիկ մահով ընկածները շնորհների են արժանանում»:

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

15 Ղուկ. ԺԳ. 6-9: Պողոս առաքյալը եւս միջնորդական աղոթքով դիմում է Աստծուն (Բ. Կորնթ. Ե. 20) կորնթացիների համար, որ հաշտվեն Աստծու հետ: Երեմիա Է. 16-ում Աստված ասում է մարգարեին, որ «մի՛ աղօթիր այդ ժողովրդի համար, դրանց համար ողորմութիւն մի՛ խնդրիր եւ մի՛ աղաչիր»:

16 Յայտն. Զ. 9-10:

17 Ղուկ. ԺԸ. 10:

18 Ինչպես օրինակ մեր Եկեղեցու Հոգեհանգստյան կարգը: